

ՔԱՌՍՈՒՆՔԸ ՉԵԼԱԾ...

Աղուոր, վարդի պէս երախայ մը:

Բայց կոպերը ուռած եւ կարմրած են, աչքերը փակ, առատ, կանանչորակ թարախ մը իր երեզը կը զծէ մինչեւ ուռնակերուն կողերը:

Տարէց կին մը — մեծ մայրիկը — կարմիր սնդուաէ խանձարուրի մը մէջ փաթթած գրկած է զայն: Գլխարկ դրած «նոր» թուրք երիտասարդ մը կ'ընկերանայ իր երախային:

— Առջինեկս է, ծնելէն ի վեր դեռ աչքերը չբացուեցան, կ'ըսէ անհող, երիտասարդ հայրիկը:

— Քանի՞ օրուան է:

— Այսօր քառասունը մէկերորդ օրն է:

— Մինչեւ հիմա ի՞նչու բժշկի չդիմեցիք:

— Զէնք կրնար, վրայ կը բերէ մեծ մայրիկը, քառասունը չեղած երախան դուրս հանելը մեղք է...:

— Մի՞թէ... կը մըմռամ ինքնիրենս եւ երբ շատ մը դժուարութենէ վերջ կը յաջողիմ կոպերը լաւ մը բանալ եւ ակնակապիծները դիտել, անձկութենէս լուռ, քանի մը երկվայրկեան չեմ կրնար բան մը ըսել:

Ամէն բան վերջացած է, երկու աչքերուն ալ եղջերիկները ծակար, աչքերը անձեւ, կողտ խիւսեր դարձած են, լոյսը վերջնապէս, յաւիտեանա՛պէս փախած, հրաժարած է լուսաւորելէ երկու վերաւոր, անթափանց մսազունդեր՝ որոնք կեանքի մը ամբողջ տեւողութեան սահմանուած էին լոյսի հեշտանքին եւ գեղեցկութեան:

— Զաւակդ կուրցած է, եւ վերջնականապէս, կ'ըսեմ հայրիկին, մէկդի կանչելով:

Մի ըսեր, պիտի խենդենամ... կ'ըսէ թուրքը, յայտնի բայց քիչ մը հանդիսաւոր յուզումով մը:

— Կը ցաւիմ, բայց այդպէս է, և միակ դո՛ւն ես երախայիդ կուրութեան պատճառը:

— Մ'ս, ե'ս... կը գոչէ երիտասարդը եւ առանց շունչ առնելու, ետեւէ ետեւ հազարումէկ խօսքեր կ'ընէ, ապացուցանելու համար թէ ինքը հարուստի գաւակ է, թէ իր կնոջ, երախայի հանգստութեան համար ոչինչ խնայած է:

— Աստուծո՛ւ ոչինչ, կ'ըսեմ սառնասիրտ, դժբախտութիւնը ուրիշ տեղ է. մարդարէ՛ք ըլլալու պէտք չկայ, ենթարկուած ես ջիր-

մամիզութեան, լաւ չդարմանուած ամուսնացած ես, կնիկդ վարակած, յետոյ երախտով ծնելու միջոցին անկէ վարակուած է, եւ դեռ քառասուն օրեր առանց դեղի դարմանի ձգած ես, որպէսզի ահաւոր ախտին աւերը կատարեալ ըլլայ:

— Պարոն բժիշկ, զոնէ պզտիկ յոյս մը տո՛ւք, կ'աղերսէ մեղաւոր եւ տժգունած հայրիկը...

— Աւա՛ղ բարեկա՛մս, այս աչքերէն ներս յոյսը յաւիտեանապէս մեռած է:

Մարդը դառնօրէն կուլայ:

— Երախային ճակատագիրը այդպէս է եղեր, կ'աւելցնէ մեծ մայրիկը, դողդոջուն ափովը կաթիլ մը արցունք վար առնելով:

* *

Մեր երիտասարդներէն քիչեր կան, որ զոնէ ժամանակ մը մտերմացած չըլլան շերմամիզութեան հետ. անոր անկատար դարմանումը, ապաւային շատ գործ կը բանայ իրենց գլխուն: Զեմ ուզեր ծանրանալ, բայց լաւ կ'ըլլար որ մտքէ չհեռացնէին թէ առանց շերմամիզութիւնը լաւ դարմանելու կատարուած ամուսնութիւնը, աղէտ մըն է թէ կնոջ, եւ թէ ընտանիքին ապագայ բարօրութեան եւ երջանկութեան համար: Երբ երեւութական դարմանումէ մը վերջ ամուսնութիւն տեղի ունենայ, եւ ախտը նորէն գլուխ ցուցնէ, վարակուած զոյգը, առանց երկար բարակ սպասելու, պէտք է դիմէ բժիշկին:

Իսկ վարակումի շրջանին երբ յղութիւն յառաջ գայ, այն ատեն իրենց գլխաւոր մտահոգութիւնը պէտք է ըլլայ շարունակել դարմանումը, յետոյ երախայի ծնունդէն վերջ, առնուազն շաբաթ մը հետաքրքրուիլ երախային աչքերով: Դիմել կանխազգուշական միջոցներու, եւ աչքերու բորբոքումի պարագային կատարել արագ եւ ազդեցիկ դարմանում մը:

Քաղաքակիրթ երկիրներու մէջ (օրկ. Յորանսա, Անգլիա, Գերմանիա) բժիշկները եւ վկայեալ մանկաբարձուհիները ամէն երախայի ծնունդէն վերջ, առանց բացառութեան, իբր կանխազգուշիւն աչքերուն մէջ կը կաթեցնեն Nitrate d'argentի (Ֆէյէն-նէմ Թաշը) 1 առ հարիւր լուծոյթ մը: Բժիշկ չեղած տեղեր, զոնէ քանի մը կաթիլ լիմօնի ջուր կաթեցնելու է:

(Պազարճըզ)

ԲԺ. Ա. ՍԱԼԻԻ